ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՆԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԾՁԲ-20/11

ք. Երևան «18» փետրվարի 2020 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Կոնդ թաղամասի տեղագրական հատակագծերի ստեղծման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 28200000 (քսանութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	«ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Հաղթանակ թաղ. 4-րդ փող., 57
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1510028787840100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01847486
Գլխավոր	
քարտուղարի ժ/պ ..... Գ. Եգանյան	տնօրեն ..... Հ. Պետրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ԿԿ-ԳՀԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	71351530/1	Երևան քաղաքի Կոնդ թաղամասի տեղագրական հատակագծերի ստեղծման ծառայություններ	դրամ	28200000	1		Պայմանագրի հաշվառման պահից մինչև 10.06.2020 թ. (45 օրացույցային օրվանից սկսած)

1. Բնագավառի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի Կոնդ թաղամասի կադաստրային քարտեզներում տեղ գտած սխալների ու անճշտությունների ճշգրտումը և դրան զուգահեռ հողային ֆոնդի ամբողջական դիտարկման իրականացումը հույժ կարևոր խնդիր է կադաստրային քարտեզագրման աշխատանքներում, քանի որ կադաստրային հատակագծերը (քարտեզները) անշարժ գույքի պետական գրանցման համակարգի հիմնական փաստաթղթերից են և ծառայում են անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գնահատման, հողի հարկի և գույքահարկի բազայի ստեղծման վարման համար:

Երևան քաղաքի տարածքում անշարժ գույքի կադաստրային քարտեզագրման աշխատանքները սկսվել են 1998թ. և ավարտվել՝ 2002թ: Քարտեզագրման աշխատանքներն իրականացվել են մրցութային կարգով մասնավոր իրավաբանական անձանց կողմից, իսկ թվայնացման աշխատանքները կատարվել են կենտրոնացված՝ սկզբում կոմիտեի «Տեղեկատվական կենտրոն» ստորաբաժանման, այնուհետև՝ «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Կադաստրային քարտեզագրման հանութային հիմքը 1998-2000թթ. ստեղծվել է պայմանական, տեղական, CK-63 և CK-42 կոորդինատային համակարգերում, իսկ 2001թ.՝ CK-42 կոորդինատային համակարգում: Հանութագրման աշխատանքները կատարվել են ավանդական վերգետնյա (մենզուլային, տախեոմետրական հանույթների, գծային և անկյունային հատումների) եղանակով:

Քարտեզագրման հանութագրման աշխատանքներն իրականացնելիս թաղամասերի սահմանները տարվել են պայմանական և մոտավոր, որոնք հետագայում ենթարկվել են ուղղման տեղագրական քարտեզներով: Արդյունքում թվայնացված կադաստրային հատակագծերում բազմաթիվ թերություններ մնացել են սկզբնական սխալներով:

Հանութագրման նման եղանակների դեպքում հնարավոր չէ բարձր ճշտությամբ արտահայտել իրադրության կամ որոշ օբյեկտների կորագիծ տարրերը և դրանցով ստացված պոլիգոնների (փակ տիրույթների) մակերեսները: Բացի դրանից, ինչպես գիտենք հանրապետությունում հողատեսքերի բաժանման գործընթացն իրականացվել է 1991 թվականից տեղական հողային հանձնաժողովների կողմից: Չափագրված արդյունքներն այնուհետև տեղափոխվել են բնության մեջ սովորական ոչ ստուգված ժապավեններով կամ ոչ

ճշգրտված այլ չափման միջոցներով, որի արդյունքում ի հայտ են եկել անընդունելի սխալներով հատկացված և փաստացի տնօրինվող սեփականաշնորհված միավորներ: Այդ սխալները վերհանվեցին ժամանակակից գեոդեզիական գործիքներով, կադաստրային քարտեզների ստեղծման նպատակով, կադաստրային և տեղագրական հանութագրման աշխատանքների ժամանակ: Նկատի ունենալով տվյալ ժամանակահատվածի պահանջները (սեփականաշնորհված հողամասերի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցում և փաստաթղթերի հանձնում սեփականատերերին), որոշում կայացվեց հողամասերի հանութագրման տվյալները թվայնացնել և ստեղծել կադաստրային քարտեզներ:

Երևան քաղաքի համար տեղագրական և կադաստրային քարտեզները ստեղծվում էին Երևան քաղաքի համար ընդունված տեղական կոորդինատային համակարգում: Տեղական կոորդինատային համակարգերում ստեղծված կադաստրային քարտեզները մեկ միասնական՝ WGS-84 (ArmREF02) ազգային կոորդինատային համակարգի բերելուց հետո առաջացան անշարժ գույքի միավորների սահմանների որոշակի սխալներ:

Նշված բացթողումներն ուղղելու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի դաշտային և գրասենյակային աշխատանքներ հողատարածքների սահմանագծերը համադրելու՝ օգտագործելով 10 ppm լուծաչափի թույլտվությամբ 2014 թվականի 11-38-138(113-1) և 11-38-138(113-4) 1:2000 մասշտաբ անվանաթերթերով օդալուսանկարներ, որոնք պատվիրատուի կողմից կտրամադրվեն:

Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված անշարժ գույքի միավորների գլխավոր հատակագծերի գրանցման գործընթացում կադաստրի տարածքային ստորաբաժանումների կողմից վերը նշված կադաստրային քարտեզների անճշտությունների պատճառով քաղաքացիների դիմումները մերժվում են կամ ուղղման նպատակով ետ են վերադարձվում քաղաքացիներին:

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Տեղագրական հանութագրման աշխատանքների իրականացման գործընթացում անճշտություններից խուսափելու համար, անհրաժեշտ է օգտագործել վերը նշված անվանակարգերով օրթոֆոտոհատակագծերը, քանի որ դրանց վրա պարզ երևում են, շենք-շինությունները, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը, վերգետնյա մայրուղային հաղորդակցուղիները, ցանկապատերը, հենապատերը, հիդրոգրաֆիան, ճանապարհային ցանցերը և այլն:

Ելնելով իրավիճակի վերլուծությունից և ուսումնասիրելով կատարած ֆոտոգրամետրիական եղանակով քարտեզագրական ուղղման աշխատանքները, ինչպես նաև անշարժ գույքի կադաստրի համակարգում մասնագետների կողմից կատարված կադաստրային հատակագծերում առկա որոշակի անճշտությունների վերաբերյալ վերլուծությունները, անհրաժեշտություն է առաջանում ստեղծված տեղագրական խոշորամասշտաբ հանութագրման նյութերը կիրառել կադաստրային քարտեզների որոշակի անճշտությունների ուղղման և թարմացման աշխատանքների իրականացմանը, որը և հիմք կհանդիսանա միասնական կոորդինատային համակարգում անշարժ գույքի սահմանների ճշգրտման, դրանց ամրացման և օրենսդրական ակտերով ձևակերպման գործընթացին: Այսպիսի եղանակով ստեղծված նյութերը մյուս ավանդական եղանակով ստեղծված քարտեզներից տարբերվում է նրանով, որ արդյունքում ստանում ենք օրթոֆոտոհատակագծերն (նկարը առանց աղավաղումների), արտահայտված միասնական մեկ մասշտաբով, որը հիմք է հանդիսանում տեղագրական, կադաստրային հատակագծերի կամ երկրատեղեկատվական հիմքի ստեղծման համար:

Համադրելով տվյալ տեղանքի օրթոֆոտոհատակագիծը և տեղագրական կամ կադաստրային հատակագիծը, անգամ ոչ մասնագետների համար ավելի պատկերավոր ու տեսանելի են դառնում քարտեզի սխալի անհամապատասխանությունները և ավելի ճանաչողական տվյալներ են տալիս տեղանքի վերաբերյալ:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ 2013թ. ստեղծված Հայաստանում մշտական գործող ռեֆերեց կայանների ցանցի (ՄԳՌԿՑ) բարձր ճշտությամբ գեոդեզիական չափագրման տվյալների ստացման հնարավորությունները գերակա խնդիր է հանդիսանում քարտեզներում առկա տվյալների համադրումը, քանի որ տարբեր ոլորտների նախագծերն ու գլխավոր հատակագծերը կազմվում են տեղագրական քարտեզների հիմքի վրա և հրամայական անհրաժեշտություն է առաջանում որպեսզի և տեղագրական և կադաստրային հատակագծերը միմյանց հետ լինեն համատեղելի:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

Երևանի Կոնդ թաղամասի կադաստրային քարտեզներում տեղ գտած սխալների ու անճշտությունների ճշգրտմանն ուղղված տեղագրական հատակագծերը կազմելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

- Հաստատված ծավալների և սույն առաջադրանքի հիման վրա կազմել տեխնիկական նախագիծ:

- Ուսումնասիրել թաղամասի գլխավոր հողօգտագործման հատակագծի հիման վրա ձեռք բերված 1096 միավոր (ըստ 2019 թվականի մարտի 26-ի N 1633-Ա որոշման և 2009 թվականի N 1454 գլխավոր հատակագծի) գույքերի կադաստրային գործերը՝ վերադրելով դրանք երկու օրթոֆոտոհատակագծերի վրա:

- Ֆոտոգրամետրիայի համար նախատեսված անօդաչու թռչող սարքով Կոնդ թաղամասի տարածքի վրա իրականացնել օդալուսանկարահանում, կապակցվող գեոդեզիական կետերի օգնությամբ ստեղծելով օրթոֆոտոհատակագծեր (թույլատրելի լուծաչափը ոչ պակաս քան 3 սմ-ն է):

- Իրականացնել տարածքում տեղադրված պետական և խտացման գեոդեզիական պլանաբարձունքային կետերի տեղազննում և հետազոտում:

- Իրականացնել GNSS արբանյակային ռովեր կայանով 50 հիմնակետերի դիտարկման աշխատանքներ, ստանալով դրանց կոորդինատների կատալոգները:

- 1096 անշարժ գույքերի միավորմերի համար ստանալ դրանց (հողամասեր, շենք-շինություններ) շրջադարձային կետերի կոորդինատները և ըստ առանձին ուրվագծերի թվայնացնել:

- Օդալուսանկարահանման, GNSS արբանյակային ռովեր կայանով 50 հիմնակետերի դիտարկման և տախեոմետրական հանութագրման աշխատանքներում անհրաժեշտ է՝

- ընդգրկել երեք մասնագետներ (առաջատար մասնագետ, I կարգի մասնագետ և II կարգի մասնագետ),
- կիրառել ճշգրիտ օրթոֆոտոհատակագծերի ստեղծման համար անհրաժեշտ մասնագիտացված անօդաչու թռչող սարք,

- արբանյակային GNSS առնվազն երկու ընդունիչ կայաններ,
- ժամանակակից էլեկտրոնային երեք տախեոմետրեր:

• Ստացված դաշտային չափագրման արդյունքների հիմնան վրա ըստ տեղագրական տարրերի արդյունքների կետերի կոորդինատները տեղաբաշխել և ստանալ կառուցապատ տարածքի պլանային հորիզոնական հատակագիծը:

• Աշխատանքների ամբողջական իրականացման արդյունքում անհրաժեշտ է ներկայացներ տեխնիկական հաշվետվություն (տպագիր 3 օրինակ և թվային) և տվյալների ստացման բոլոր ելքային նյութերը (նկարներ և այլն):

4. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում կունենանք ք. Երևան Կոնդ թաղամասի 1:500 մասշտաբի պլանային հորիզոնական ճշգրտված հատակագծեր:

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

Նախատեսվող աշխատանքների տվյալները ըստ ծավալների, տրված է աղյուսակ 1-ում:

ՀԱՇՎԱՐԿ

Կոնդ թաղամասի 1:500 մասշտաբի տեղագրական հատակագծերի հանութագրման աշխատանքների

աղյուսակ 1

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	2020 թ իրականացման ժամանակաընթացքը			Ընդհանուր Ծավալը
			Մարտ	Ապրիլ	Մայիս	
1	Տեխնիկական նախագծի կազմում	նախագիծ	1	-	-	1
2	Նյութերի ձեռք բերում	հող	1096	-	-	1096
3	Աերոնկարահանում (անօդաչու թռչող սարքերով)	հա	13	5	-	18
4	Գոյություն ունեցող նյութերի ուսումնասիրում	միավոր	800	296	-	1096
5	Գեոդեզիական ցանցերի տեղազննում և հետազոտում	հիմնակետ	7	-	-	7
6	Արբանյակային գեոդեզիական ցանցի կոորդինատների որոշում (Ռովեր)	կետ	20	20	10	50
7	Հողամասի և շենք շինությունների արտաքին չափագրում և թվայնացում	միավոր	300	400	396	1 096

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	2020 թ իրականացման ժամանակաընթացքը			Ընդհանուր Ծավալը
			Մարտ	Ապրիլ	Մայիս	

8	Հատակագծերի թվայնացում	հա	-	13	5	18
9	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետ.	-	-	-	1

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ
ք. Երևամ, Մալաթիա-Սեբաստիա,
Հաղթանակ թաղ. 4-րդ փող., 57
Հ/Հ 1510028787840100
ՀՎՀՀ 01847486

տնօրեն----------Հ. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
ԿԿ-ԳՀԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			առանց ԱԱՀ	Ընդամենը
1	71351530/1	Երևան քաղաքի Կոնդ թաղամասի տեղագրական հատակագծերի ստեղծման ծառայություններ	28200000	28200000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղարի ժ/պ----------Գ. Եգանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ
ք. Երևամ, Մալաթիա-Սեբաստիա,
Հաղթանակ թաղ. 4-րդ փող., 57
Հ/Հ 1510028787840100
ՀՎՀՀ 01847486

տնօրեն----------Հ. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
ԿԿ-ԳՀԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԿԿ-ԳՀԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն